



Մասնագիտական կարծիք «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ

2020 թվականի հունվարի 9-ին ՀՀ կառավարությունը Ազգային ժողով է ներկայացրել «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի նախագիծը (այսուհետ նաև՝ Նախագիծ), որն իրավաչափության տեսանկյունից խիստ խնդրահարույց է հետևյալ պատճառներով.

1. «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 15-րդ կետի համաձայն՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթ իրականացնելու իրավասու մարմինը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության պատասխանատու ստորաբաժանումն է:

ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Դատախազությունն օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան»:

Վերոգրյալ իրավանորմի վերլուծությունից բխում է, որ Դատախազությունը կարող է հայց հարուցել դատարան՝

- ա) օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով,
- բ) պետական շահերի պաշտպանության նպատակով:

Մրան հակառակ, Նախագծով՝

ա) Դատախազությունը ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթ իրականացնում է բոլոր դեպքերում՝ որպես ընդհանուր կարգ, այսինքն՝ չի ապահովվում Դատախազության՝ միայն բացառիկ դեպքերում դատարան հայց հարուցելու սահմանադրական պահանջը:

բ) Դատախազությունը դատարան հայց հարուցելու է ոչ միայն պետական, այլև մասնավոր անձանց շահերի պաշտպանության նպատակով, այսինքն՝ չի ապահովվելու նաև Դատախազության՝ միայն պետական շահերի պաշտպանության հայց դատարան հարուցելու սահմանադրական պահանջը:

Այսպիսով, Նախագծի 3-րդ հոդվածի 15-րդ կետը հակասում է ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածի 3-րդ մասին՝ ՀՀ գլխավոր դատախազության սահմանադրական լիազորությունների վերագանցման հիմքով, ուստի ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթն ինքնին լինելու է ոչ իրավաչափ:

2. Նախագծի 3-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանվում են այն հանցագործությունները, որոնք ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթ իրականացնելու առիթ են հանդիսանում: Նշված իրավակարգավորմամբ օրենքի գործողության ոլորտն այնքան է ընդլայնվել, որ ընդգրկում է նաև մասնավոր անձանց իրավահարաբերությունները (օրինակ՝ առևտրային կաշառք (ՀՀ ՔՕ 200 հոդված), Առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունները

չարաշահելը (ՀՀ ԶՕ 214 հոդված), Արհեստավարժ մարզամրցումների և հանդիսավոր առևտրային մրցույթների մասնակիցներին ու կազմակերպիչներին կաշառելը (201-րդ հոդված) և այլն):

Նշված դրույթը ցույց է տալիս, որ օրենքի գործողությունը տարածվելու է ոչ միայն նախկին և ներկա հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և նրանց հետ փոխկապակցված անձանց վրա, այլև մասնավոր անձանց վրա:

Գտնում ենք, որ այս փուլում օրենքի գործողության ոլորտի այսպիսի ընդլայնումը խիստ ծայրահեղական է հատկապես այն պարագայում, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործիքն առավելապես կիրառելի է կոռուպցիայի և փողերի լվացման դեմ պայքարում, բայց ոչ սեփականության դեմ հանցագործություններում: Բացի այդ, այն նոր երևույթ է մեր իրավահամակարգի համար և նրա ներմուծումը պետք է լինի առավել զգուշավոր կերպով հնարավոր բացասական ազդեցություններից (տնտեսական ակտիվության անկում, կապիտալի արտահոսք, ներդրումների նվազում և այլն) խուսափելու նպատակով:

3. Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավասու մարմինը կարող է սկսել ուսումնասիրություն, ի թիվս այլ հիմքերի, նաև այն դեպքերում, եթե՝

2) հարուցված քրեական գործով անձը որպես մեղադրյալ է ներգրավվել սույն օրենքով նախատեսված հանցագործություններից որևէ մեկի կատարման համար և առկա են բավարար հիմքեր կասկածելու, որ առկա է ապօրինի ծագում ունեցող գույք:

5) «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով սահմանված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում հայտնաբերված տվյալներով առկա են բավարար հիմքեր կասկածելու, որ պաշտոնատար անձի կողմից ձեռք է բերվել ապօրինի ծագում ունեցող գույք:

Վերոգրյալ հիմքերով ուսումնասիրություն սկսելը խնդրահարույց է հետևյալ պատճառներով՝

Նշված հիմքերը ենթադրում են կանխարգելիչ բռնագանձման գործիքի (preventive confiscation) կիրառում: Այս գործիքն առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման խիստ ծայրահեղ միջոց է, որը սահմանափակ եղանակով կիրառվում է Իտալիայում: Մասնավորապես, Իտալիայում այն տարածվում է միայն այն անձանց վրա, որոնք դատապարտված չեն, բայց կասկածվում են մաֆիայի հետ կապեր ունենալու մեջ, այսինքն՝ կանխարգելիչ բռնագանձման գործիքի կիրառումը պայմանավորված է անձի հանրային վտանգավորության աստիճանով, ով ապօրինի ձեռք բերված ակտիվներով վնասում է տնտեսության առողջ դրությունը:

Մայրցամաքային իրավահամակարգի այլ երկրներում կիրառվում է բացառապես ընդլայնված բռնագանձման գործիքը, երբ՝

ա) առկա է մեղադրական դատավճիռ, որի հիման վրա առկա են բավարար հիմքեր կասկածելու, որ դատապարտված անձին կամ իր հետ փոխկապակցված անձին պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք, որը չի բռնագանձվել դատավճռով,

բ) առկա է սկսված քրեական վարույթ, բայց մեղադրական դատավճռի ստացումն անհնար է (անձը մահացել է, անցել են վաղեմության ժամկետները, անձեռնմխելիություն և այլն):

Այսպիսով, ՀՀ կառավարությունը որդեգրել է կանխարգելիչ բռնազանձման գործիքի այնպիսի կիրառում, որը չունի իր նախադեպը և հակասում է միջազգային լավագույն փորձին:

Այս համատեքստում նշված հիմքերը հակասում են նաև օրենքի բուն էությանը և համաչափ չեն հետապնդվող իրավաչափ նպատակի հետ համեմատ: Այսպես.

Օրենքի նախագծից բխում է, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնազանձման վարույթն ուղղակիորեն պայմանավորված է նույն նախագծով նախատեսված հանցագործություններից որևէ մեկի առկայությամբ: Դրան հակառակ, նշված հիմքերով ուսումնասիրությունն սկսելու դեպքում պարտադիր չէ նախագծով նախատեսված հանցագործություններից որևէ մեկի առկայության հաստատումը, այսինքն՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնազանձման վարույթը շարունակվելու է, և անձը կրելու է իր գույքի օրինական ծագման ապացուցման բեռն անգամ այն դեպքում, եթե ուսումնասիրության հիմք հանդիսացած քրեական գործի վարույթը կարճվի հանցադեպի կամ հանցակազմի բացակայության հիմքով:

Բացի այդ, նշված դրույթից բխում է, որ հարուցված քրեական գործի պայմաններում դեռևս քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ապօրինի գույքը բռնազանձելու գործիքակազմը չսպառած՝ զուգահեռ ընթանալու է նաև ապօրինի ծագում ունեցող գույքի բռնազանձման քաղաքացիական վարույթ: Սա այն դեպքում, երբ առանց մեղադրական դատավճռի ակտիվների բռնազանձման գործիքի կիրառման նպատակը ոչ թե ամեն գնով գույքի բռնազանձումն է, այլ ապօրինի գույքը բռնազանձելու՝ քրեական գործի վարույթով օբյեկտիվ պատճառներով առաջացած խոչընդոտների հաղթահարումը: Այս համատեքստում ինքնին անտրամաբանական է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնազանձումը իրականացնել միաժամանակ քրեական և քաղաքացիական վարույթներով և, ըստ այդմ, անձի վրա դնել միևնույն խնդրով և՛ քրեական, և՛ քաղաքացիական վարույթներից միաժամանակ պաշտպանվելու անհամաչափ բեռ:

Այսպիսով, գտնում ենք, որ նշված հիմքերով ուսումնասիրությունն սկսելը չի հետապնդելու նախագծից բխող հանցավոր ճանապարհով ձեռք բերված ակտիվների բռնազանձման իրավաչափ նպատակ և, միևնույն ժամանակ, անձանց վրա դնելու է սեփականության իրավունքը պաշտպանելու անհամաչափ բեռ:

4. ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն»:

Նշված նորմը ամրագրում է անձի իրավական վիճակը վատթարացնող իրավական ակտերի հետադարձության ուժի մերժման սկզբունքը: Սահմանադրական այս դրույթի յուրահատկությունը դրսևորվում է նրանում, որ, ի տարբերություն մի շարք միջազգային պայմանագրերում¹ և առանձին երկրների սահմանադրություններում ամրագրված համարժեք դրույթների², այն օրենքի հետադարձ ուժի արգելքը տարածում է ոչ միայն քրեական պատասխանատվություն սահմանող օրենքների վրա, այլ նաև իրավական պատասխանատվության այլ ձևեր՝ քաղաքացիական, վարչական, կարգապահական պատասխանատվություն սահմանող օրենքների վրա: Ավելին, օրենքի հետադարձ ուժի

¹ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 11-րդ հոդված, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդված, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 15-րդ հոդված:

² Մասնավորապես, տե՛ս Էստոնիայի Սահմանադրության 23-րդ հոդվածը, Հունգարիայի Սահմանադրության 57-րդ հոդվածը, Գերմանիայի Դաշնության Սահմանադրության 103-րդ հոդվածը:

արգելքը տարածվում է ոչ միայն պատասխանատվություն սահմանող օրենքների վրա, այլ նաև ընդհանրապես որևէ կերպ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքների վրա, ինչը ենթադրում է, որ նշված սահմանադրական դրույթում ամրագրված արգելքը վերաբերում է ոչ միայն նյութական իրավունքի նորմերին, այլ նաև վարույթային իրավունքի նորմերին³:

2008 թ. հունվարի 15-ի ՄԴՈ-723 որոշմամբ բացահատվել է նշված դրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը, ըստ որի՝ «վերջինս հանդիսանում է պետական իշխանության նկատմամբ վստահության և իրավական պետության սկզբունքների կարևոր բաղադրատարրերից մեկը: Այդ սկզբունքը միաժամանակ հանդես է գալիս որպես իրավական որոշակիության սկզբունքի ապահովման կարևոր երաշխիք: Օրենքի հետադարձ ուժի մերժման սկզբունքից բխում է այն արգելքը, համաձայն որի՝ անթույլատրելի է այն իրավունքների սահմանափակումը կամ վերացումը, որոնք ամրագրվել են նախկինում գործող նորմերի հիման վրա»:

Վերոգրյալից բխում է, որ անձի իրավական վիճակը վատթարացնող նորմերի հետադարձ ուժի արգելման սկզբունքը՝ իրավական անվտանգության սկզբունքի հետ մեկտեղ, կոչված է ապահովելու լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքը: Հարկ է նշել, որ մինչ այս Նախագիծը, ՀՀ օրենսդրության համաձայն, գույքի ապօրինի ծագում ունենալու ապացուցման բեռը ամբողջապես դրված էր իրավապահ մարմինների վրա անմեղության կանխավարկածի սկզբունքի հարգման համատեքստում: Այս պարագայում անվիճելի է անձի վիճակի վատթարանալը իր վարույթային իրավունքների տեսանկյունից: Այս խնդիրը ակտուալ է հատկապես այն դեպքերում, երբ անձինք նախկինում իրենց օրինական եկամուտների աղբյուրների մասին ապացույցներ չեն պահպանել կամ չէին ձևակերպել այն պատճառով, որ լեգիտիմ ակնկալիքներ են ունեցել իրենց գույքի օրինական ծագում ունենալու մասին ապացուցման բեռ չկրելու վերաբերյալ:

Վերոգրյալի հիման վրա գտնում ենք, որ Նախագիծը վատթարացնում է անձի իրավական վիճակը և չի ապահովում անձի լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքը, ուստի այն հակասում է ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասին:

5. Նախագծի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Երրորդ անձի կողմից ձեռք բերված ապօրինի ծագում ունեցող գույքը ենթակա չէ բռնագանձման, եթե վերջինս ապացուցում է, որ.

- 1) գույքը ձեռք բերելու պահին չգիտեր եւ ողջամտորեն չէր կարող իմանալ գույքի՝ ապօրինի ծագում ունենալու մասին, եւ
- 2) գույքի դիմաց հատուցումն իրականացվել է օրինական եկամուտների օգտագործմամբ»:

Տվյալ հոդվածի կարգավորմամբ հասկանալի չէ, թե ինչու է երրորդ անձանց վրա դրվում ապացուցման պարտականության այն բարձր շեմը, որը դրվում է նաև անմիջականորեն ապօրինի ծագում ունեցող գույքը ձեռք բերողի վրա: Ընդ որում՝ նշված դրույթներով որոշ ձևակերպումներ առհասարակ խնդրահարույց են. մասնավորապես պարզ չէ, թե երրորդ անձի համար իր չիմացությունը ինչպես կարող է լինել ապացուցման առարկա:

Մեր գնահատմամբ նշված դրույթներով ապացուցման բեռը ամբողջապես պետք է դրվի իրավասու մարմնի վրա, հակառակ դեպքում վնաս է հասցվելու ՀՀ քաղաքացիական

³ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ/ընդհանուր խմբագրությամբ՝ Գ Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Եր.: «Իրավունք», 2010, Էջ 497

օրենսդրությամբ հատուկ պաշտպանություն ունեցող բարեխիղճ ձեռք բերողների
ինստիտուտին:

Վերոգրյալի հիման վրա համապատասխանաբար եզրակացնում ենք, որ
Նախագիծը իրավաչափության տեսանկյունից խնդրահարույց է և հակասում է ՀՀ
Սահմանադրության մի շարք դրույթներին, ուստի անհրաժեշտ ենք համարում այն
վերանայել: